ԱՇՏԱՐԱԿԻ ԽՈՋԱԲԱՂԵՐԻ ԴԱՄԲԱՆԱԹՈՒՄԲԸ ԴԱՄԲԱՆԱԲԼՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագիտական ջոկատը Ավտոճանապարհների շինարարության և վերանորոգման Աշտարակի արտադրական միավորման հետ կնքված պայմանագրով 1988 թ. պեղումներ է կատարել Երևան–Գյումրի ավտոմայրուղու Աշտարակը շրջանցող հատվածում՝ «Խոջաբաղեր» կոչվող տարածքում[1], որն ընդգրկում է քաղաքի հյուսիսային և արևմտյան արվարձաններն ու դրանք եզերող հողերը: Պեղված դամբանաթումբը[2] Խոջաբաղերի արևմտյան խմբի (Խոջաբաղեր – 2) հուշարձաններից է, որոնք գտնվում են խաղողի այգիների հարևանությամբ և հարավ-արևմուտքից սահմանակից են «Վերին նավեր» դամբարանադաշտին:

Քարահողային լիցքով դամբանաթումբն ուներ 8–8,5 մ տրամագիծ և 0,5–0,6 մ բարձրություն: Թմբի գագաթին, նրա երկրաչափական կենտրոնում, դրված էր 0,5 մ բարձրությամբ բազալտե անմշակ որձաքար: Թումբը չուներ արտաքին քարե շրջան՝ կրոմլեխ, սակայն նրա տակ՝ գագաթի մոտ, կարծես թե, շրջագծվում էր 4–5 մ տրամագծով քարե անկանոն օղակ, որի տարբեր հատվածներում նկատվում էին հնագիտական առարկաների որոշակի կուտակումներ (նկ.): Դամբանափոսի բացակայությունից կարելի էր եզրակացնել, որ ծիսական հարթակի վրա վերգետնյա թաղում է կատարվել: Դամբանաթմբի պեղումներով հայտնաբերվել են վանակատե և կայծքարե տարաբնույթ արտեֆակտեր՝ 333 միավոր, վանակատից պատրաստված մեկ կոտրված նետասլաք, ծառի բնափայտի մի փոքրիկ կտոր և բազմաթիվ խեցատներ: Գտնվել են նաև այրված բարակ ճյուղերի ածխացած մանր մնացորդներ:

Վանակատե և կայծքարե առարկաների թվում գերակշռում են բեկորներն ու կտորները, կան միջուկներ, ծլեփներ, ծլեփների հարդարումով պատրաստված գործիքներ, շեղբեր: Բեկորներից երեքը ծածկված են բնորոշ թաղանթով և կարող են քարեդարյան լինել[3]: Հիշյալ գտածոների շարքում խիստ հետաքրքրական է նետասլաքի չհաջողված պատրաստուկի (խոտան) առկայությունը, որը կողմնակի վկայություն կարելի է համարել պեղումներով հայտնաբերված

---

[1] *Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Աշտարակի Խոջաբաղերի դամբարանները.– Հայկական ԽՍՀ-ում 1987–1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան. Զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԴՀԱԱ). Երևան, 1989, էջ 12–13:*

[2] *Դամբարանը հայտնաբերել է հնագետ Հ. Սիմոնյանը՝ ճանապարհի շինարարության կապակցությամբ տեղազննություն կատարելիս:*

[3] *Քարե արտեֆակտերը դասակարգելու և դրանց գործառական նշանակությունը որոշելու հարցում պարտ ենք Վաղ հնագիտության բաժնի գիտաշխատող, երջանկահիշատակ Հ. Ղազարյանին:*

միակ նետասլաքի (աղ., 1) տեղում պատրաստված լինելու վերաբերյալ: Վերջինս նշաձև է, մանրակրկիտ հարդարված կողերով, հիմքում՝ ուղղանկյուն փորվածքով: Ըստ դասակարգման սանդղակներից մեկի, այն պատկանում է նետասլաքների երրորդ տիպին[4]: Փորված հիմքով նետասլաքները Հայկական լեռնաշխարհում հայտնի են դեռևս կուր-արաքսյան մշակույթի հուշարձաններից (Գառնի, Ջրառատ[5], Քեթի[6], Բաբա դերվիշ[7] և այլն): Դրանց գոյությունը շարունակվում է դամբանաբլրային մշակույթում (Արցախ[8], Թռեղք[9], Մանգլեաց փոր[10], Ծոբոփոր[11]) և միջին բրոնզի դարաշրջանում (Յուրտագետ (Զուրտակետի)[12], Թռեղք[13], Լոռի[14], Արարատյան դաշտ[15], Շիրակ[16]):

Պեղումներով գտնված բնափայտի կտորը շագանակագույն է, 3 x 2 x 0,5 սմ չափերով: Թե այն ի՞նչ իրի մաս է կազմել, դժվար է ասել: Կարելի է միայն ենթադրել, որ փայտի այդ կտորը ուժեղ ճնշման է ենթարկվել, որի հետևանքով ծառի տարեկան օղակները չեն պահպանվել: Հաջողվել է նաև

---

[4] С. А. Е с а я н. Оружие и военное дело Древней Армении (III–I тыс. до н. э.). Ереван, 1966, с. 45, табл. VIII, 8–12.

[5] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում. Երևան, 1967, էջ 42, աղ. VI, վերին շարք, կենտրոնում:*

[6] Л. А. П е т р о с я н. Раскопки памятников Кети и Воскеаска (III–I тыс. до н. э.). Ереван, 1989, с. 20, табл. 2, 14.

[7] Г. С. И с м а и л о в. Археологическое исследование древнего поселения Баба-Дервиш (III–I тыс. до н. э.). Баку, 1978, с. 82, табл. XXV, 11, 12.

[8] Я. И. Г у м м е л ь. Некоторые памятники раннебронзовой эпохи Азербайджана.– Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры. М.–Л., 1948, вып. XX, с. 18-19, рис. 8, 4.

[9] Л. Г. Ж о р ж и к а ш в и л и, Э. М. Г о г а д з е. Памятники Триалети эпохи ранней и средней бронзы. Тбилиси, 1974, с. 58-59, табл. 46, 348; 47, 357.

[10] *Պատմական Մանգլեաց փոր գավառի (այժմ՝ Վրաստանի Թեթրի ծղարոյի շրջան) դամբանաբլուրները հնագիտական գրականության մեջ հայտնի են «բեդենյան» անվանումով. տե՛ս* Г. Ф. Г о б е д ж и ш в и л и. Бедени–культура курганных погребений. Тбилиси, 1980, с. 22, рис. 6; с. 76, рис. 28; табл. VI, VII (на груз. Ÿяз.).

[11] О. Д ж а п а р и д з е. Курганы эпохи бронзы.– Отчет Квемо Картлийской археологической экспедиции (1965–1971 гг.). Тбилиси, 1975, с. 162, рис. 60, 12; с. 164, рис. 62, 5 (кург. № 6), таб. XXXV, 5; XL, 7 (на груз. яз.).

[12] О. М. Д ж а п а р и д з е. Археологические раскопки в Триалети. К истории грузинских племен во II тысячелетии до н. э. Тбилиси, 1969, с. 31, рис. 9, 3 (на груз. яз.). *Մանրակրկիտ հարդարված նմանատիպ նետասլաքների բազմաթիվ օրինակներ են հայտնաբերվել նաև Վրաստանում՝ Մարտղոփիի -5 (*Օ. Մ. Դ ж а п а р и д з е. К этнокультурной истории грузинских племен в III тысячелетии до н. э. Тбилиси, 1998, с. 47, рис. 28*) և Ալազանի գետահովտի դամբանաբլուրներում* (Ш. Ш. Д е д а б р и ш в и л и. Курганы Алазанской долины. Тбилиси, 1979, с. 67, табл. XIII, XLIII, XLIV*):*

[13] Б. А. К у ф т и н. Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, 1941, с. 121, 449, табл. CVI bis; Л. Г. Ж о р ж и к а ш в и л и, Э. М. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ* 114, *աղ.* 101, 897:

[14] С. Г. Д е в е д ж я н. Лори-Берд, I. Ереван, 1981, табл. I.

[15] А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 51, рис. 20а, 5-7; с. 67, рис. 33, 2; с. 69, рис. 34.

[16] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака (III–I тыс. до н. э.). Ереван, 1975, с. 114, рис. 69; с. 116, рис. 70.

Նկ. 1. խեցեղեն, 2. վանակատ, կայծքար, 3. վանակատե նետասլաք, 4. բնափայտ:

պարզել, որ բնափայտը պատկանում է կարմրածառ կամ տիս (Taxaceae, Taxus baccata) փշատերև ծառին[17]: Ընդունված է եղել դրա փայտն օգտագործել կահույք, մասնավորապես՝ թաղման պատգարակներ պատրաստելու համար[18]:

Այս անփոս դամբանաթմբի մշակութային պատկանելությունը պարզելու առումով, կառուցվածքի առանձնահատկությունները հաշվի առնելուց զատ, էական է հայտնաբերված խեցեղենի թվագրությունը: Հավաքածոյում գունազարդ խեցաբեկորներ չկան: Խեցատները, հիմնականում, օժտված են սև և գորշ փայլատ կամ փայլեցված մակերևույթով, վերջիններս, մասամբ, ունեն արծաթափայլ երանգ: Դրանց մակերևույթը, երբեմն, զարդաբանված է ժապավենաանկյունագծային փորագիր հորինվածքով, ինչպես նաև «ատամնավոր պտտադրոշմով» արված բեկյալներով կամ ալիքներով: Թեև բոլոր անոթները ներկայացված են բացառապես բեկորներով, այնուամենայնիվ, դրանցից մեկը, մասամբ, հնարավոր է վերականգնել: Դա նրբախեցի, բաց շագանակագույն փայլեցված մակերևույթով, կարմրավուն աստառով ոչ մեծ անոթ է, որի ուռուցիկ իրանը սահուն անցում է կատարում գլանաձև կարճ վզի և ավարտվում հարթ եզրով (աղ., 7): Զևով նման խեցանոթներ հայտնաբերվել են Ալաջա Հյույուքի «արքայական» դամբարաններում[19] և դրանց հաջորդող շերտերում[20], Ուչ թեփեի -3 դամբանաբլուրի ստորին (հիմնական) թաղումում[21], Ստեփանակերտի -119 դամբանաբլուրում[22], Թռեղքի դամբանային համալիրներում, այդ թվում՝ XLI անփոս դամբանաբլուրում (Տաբածղուրիի «ավերված մեծ կուրգան»)[23]: «Արխաիկ տիպի» այս անոթն իր զուգահեռներն ունի նաև Քարաշամբի մեծ դամբանաբլուրում[24], Հառիճում[25], Հայրավանքում (Հայաստանի պատմության պետական թանգարան, 2601/127) և այլուր:

Խոջաբաղերի դամբանաթմբից հայտնաբերված խեցաբեկորներից մեկը (աղ., 2), հավանաբար, զարդաբանված է ատամնավոր պտտադրոշմով: Երկշար սեպերով ալիքաձև զարդարված խեցանոթներ հայտնի են Թռեղքի (Բեշտաշենի)

---

[17] *Բնափայտը հետազոտել և տվյալները տրամադրել է ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Վ. Փալանջյանը:*

[18] *Օշականի դամբարանադաշտի -65 երկաթեդարյան դամբարանից գտնվել են այդ ծառի փայտից պատրաստված թաղման պատգարակի մասեր. տե՛ս* С. А. Е с а я н, А. А. К а л а н т а р я н. Ошакан, I. Ереван, 1988, с. 87.

[19] S. L l o y d. Early Anatolia. The Archaeology of Asia Minor before the Greeks. London and Tonbridge, 1956, pp. 38, 56, fig. 3, early bronze II (phase III); В. М. М а с с о н. Первые цивилизации. Л., 1989, с. 113, рис. 28, керамика. *Նման ձև ունեցող անոթներ հանդիպում են նաև Ալաջայի IV («վաղ բրոնզ I») փուլում:*

[20] C. S c h a e f f e r. Stratigraphie Comparée et Chronologie de l' Asie Occidentale. IIIe et IIe millénnaires. London, 1948, pl. XXXVIII, վերին խումբ, աջից ստորինը:

[21] А. А. И е с с е н. Раскопки большого кургана в урочище Уч-Тепе.– Материалы и исследования по археологии СССР (*այսուհետև*՝МИА), № 125. М.–Л., 1965, с. 184, рис. 38, 1.

[22] Я. И. Г у м м е л ь. *Նշվ. աշխ., էջ 18–19, նկ. 8, 12,13:*

[23] Л. Г. Ж о р ж и к а ш в и л и, Э. М. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ 27, 115, աղ. 102, 907:*

[24] В. Э. О г а н е с я н. Раскопки Карашамбского могильника в 1987 г.– Археологические работы на новостройках Армении, I. Ереван, 1992, с. 30, табл. XXV, 1.

[25] Т. С. Х а ч а т р я н. *Նշվ. աշխ., էջ 116, նկ. 71, էջ 120, նկ. 74 և այլն:*

XIV անփոս դամբանաբլուրից[26], *Լոռի բերդից*[27], *Յամաքաբերդից*[28] *և այլ հուշարձաններից: Պեղումներով ի հայտ եկած երեք այլ խեցատների մակերևույթներին նախքան թրծելը փորագրությամբ կամ սեղմելով արված երկրաչափական պատկերներ կան: Սրանցից մեկի (աղ., 5) զարդամոտիվն առկա է Օշականի ձախափնյա թաղամասի -26 դամբարանի «ստորին թաղման» փարչի (գավաթի)*[29], *Ագարակի հուշարձանախմբի բրոնզեդարյան մի խեցաբեկորի (2002/185)*[30], *Արթիկում հայտնաբերված քերեղանի*[31], *Ստեփանակերտի -119 դամբանաբլուրի խեցատներից մեկի*[32], *Թռեղքի VIII անփոս դամբանաբլուրի կարճավիզ անոթի*[33], *Թեթրի ծղարոյի (Մանգլեաց փոր) -10 դամբանաբլուրից գտնված կճուճի*[34], *Շուլավերի (Ծորփոր) -7 անփոս դամբանաբլուրի գավաթների*[35], *Յուրտագետի -3 դամբանաբլրի որոշ խեցաբեկորների*[36], *Մարտղփիի -4 դամբանաբլրի սափորի*[37] *և մի շարք այլ հուշարձաններում (Գառնի, Ջարջառիս, Գյումրի)*[38] *պեղված խեցանոթների վրա: Հետաքրքիր է, որ Գառնիի փորագիր հարդարումով խեցեղենի խումբը պատկանում է ամրոցի II տեղամասի մշակութային մի շերտի, որին նախորդում են վաղբրոնզեդարյան հորիզոնները*[39]*: Նման զարդագոտի է կրում Թռեղքի XIX (Բեշտաշենի -7, վաղ խումբ) դամբանաբլուրից և Բեշտաշենի ամրոցի կուր-արաքսյանին սահմանակից մշակութային շերտից գտնված խեցեղենը*[40]*: Ի դեպ, քննարկվող զարդամոտիվը, ասես, կրկնվում է Էլառի - 29 դամբարանում գտնված թասի վրա, միայն թե վերջինս արված է սև ներկով*[41]*: Թեև մյուս երկու խեցաբեկորների փոքր չափերի*

---

[26] Л. Г. Ж о р ж и к а ш в и л и, Э. М. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ 19–20,84, աղ. 74, 626:*

[27] С. Г. Д е в е д ж я н. *Նշվ. աշխ., աղ. I, ստորին աջից:*

[28] К. Х. К у ш н а р е в а. Новые данные о поселении Узерлик-Тепе, около Агдама.– МИА, ¹ 125, с. 97, рис. 29, 4.

[29] *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն, Ա. Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն, Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ս. Հ ո ր ո ւ յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն, Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն, Պ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Գինին հայոց ավանդական մշակույթում. Երևան, 2005, էջ 55, աղ. 25, 2: Պ. Ս. Ա վ ե տ ի ս յ ա ն. Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը.– Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2003, էջ 12:*

[30] *Այս խեցատը զարդաբանված է «կտրելու» եղանակով:*

[31] К. Х. К у ш н а р е в а. *Նշվ. աշխ., էջ 96, նկ. 28, 6:*

[32] Я. И. Г у м м е л ь. *Նշվ. աշխ., էջ 18–19, նկ. 8, 15 ե:*

[33] Л. Г. Ж о р ж и к а ш в и л и, Э. М. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ 80, աղ. 70, 583:*

[34] Г. Ф. Г о б е д ж и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ 104, նկ. 40:*

[35] О. Д ж а п а р и д з е. Курганы эпохи бронзы, с. 164, рис. 62, 4-5, таб. XLI, 2.

[36] О. М. Д ж а п а р и д з е. Археологические раскопки в Триалети, с. 44, рис. 24.

[37] О. М. Д ж а п а р и д з е. К этнокультурной истории грузинских племен…, с. 228, таб. XXI.

[38] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի, IV, Երևան, 1969, էջ 108–112, նկ. 91–93:*

[39] *Նույն տեղում, էջ 109:*

[40] Б. А. К у ф т и н. *Նշվ. աշխ., էջ 105, 229–230, 461, 465, 483, նկ. 112, աղ. CXII, ստորինը, CXIV, վերինը ձախից, CXXII, վերինն աջից:*

[41] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Էլառ - Դարանի. Երևան, 1979, էջ 62, նկ. 86: Այս դամբարանը վերագրվում է «միջին բրոնզի ամենավաղ փուլին»: Ըստ էության, գունազարդ խեցեղենի զարդապատկերները հաճախ կրկնում են սև փայլեցված խեցանոթների մակերևույթներին տարբեր եղանակներով արված զարդաբանվածքը: Մասնավորապես, զարդապատկերի ժապավենա-անկյունագծային հորինվածքը, որը բնորոշ է արագածյան (նաև կառնուտյան) խեցեղենին,*

պատճառով դրանց զարդաբանվածքը խիստ թերի է ներկայացված (աղ., 3, 4), այնուամենայնիվ հնարավոր է նկատել, որ այդ երկրաչափական զարդապատկերները նմանություն են դրսևորում ինչպես կուր-արաքսյան մշակույթի ուշ փուլի (Բաբա դերվիշ)[42], այնպես էլ դամբանաբլրային (Մարտղոփիի -4)[43] և թռեղք-վանաձորյան մշակույթներին պատկանող (Թռեղքի VII և XXXVI[44], Յուրտագետի -4[45] դամբանաբլուրներ) որոշ խեցանոթների համապատասխան զարդաձևերին: Ակնհայտ է, որ Խոջաբաղեր – 2 հուշարձանախմբի դամբանաթմբի պեղումներով հայտնաբերված խեցատները, ըստ մի շարք բնութագրիչների, ցուցաբերում են և՛ վաղ, և՛ միջին բրոնզի դարաշրջանների խեցանոթներին բնորոշ գծեր՝ ժամանակագրորեն միջանկյալ դիրք գրավելով կուր-արաքսյան մշակույթի ուշ փուլի և թռեղք-վանաձորյան մշակույթի վաղ փուլի հնագիտական համալիրների խեցեղեն հավաքածոների շարքում: Այս միտքը, հավանաբար, մեկ անգամ ևս հաստատվում է պեղված խեցեղենի թվում կոտրված կանթի առկայությամբ (աղ., 6), որը գույնով ու խեցու բաղադրությամբ աղերսվում է դիտարկված բեկորների հետ:

Մեր պեղումներին հաջորդած երկու տարվա ընթացքում Վերին նավեր դամբարանադաշտում, ի թիվս այլ դամբարանների պեղվել են չորս անփոս քարահողային դամբանաբլուրներ, որոնք թվագրվում են մ. թ. ա. XXIV–XXIII դարերով[46]: Բերքաբերի Գիլասքուտ (Գիլասքու հող) կոչվող տարածքի -1 դամբանաբլուրը համարվում է վաղ բրոնզի դարաշրջանի ուշ - միջին բրոնզի դարաշրջանի վաղ փուլի հուշարձան[47]: Սրան մոտավորապես համաժամանակյա են մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդով թվագրվող Մայիսյանի -4 և -5 դամբանաբլուրները, որոնք, սակայն, ըստ կառուցվածքի, որոշ չափով տարբերվում են նախորդ թվարկվածնե-

---

*հատկանշական է Փոքր Ասիայի հուշարձաններից հայտնաբերված, մ. թ. ա. III հազարամյակի վերջին քառորդով թվագրվող գունազարդ խեցանոթներին (*А. А. М а р т и р о с я н. *Նշվ. աշխ., էջ 45–46):*

[42] Г. С. И с м а и л о в. *Նշվ. աշխ., էջ 52-53, աղ. XVI, 9:*

[43] О. М. Д ж а п а р и д з е. К этнокультурной истории грузинских племен, таб. XXI.

[44] Э. М. Г о г а д з е. Периодизация и генезис курганной культуры Триалети. Тбилиси, 1972, с. 146, 147, табл. 19, 28, 28, 30 (на груз. яз.); Л. Г. Ж о р ж и к а ш в и л и, Э. М. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ 78, 109, աղ. 65, 566, 95, 852:*

[45] О. М. Д ж а п а р и д з е. К этнокультурной истории грузинских племен, с. 61, табл. XXI.

[46] *Հ. Ս ի մ ո ն յ ա ն. Պեղումներ Վերին նավեր հուշարձանախմբում.– ԴՀԱԱ, 1991, էջ 14–15: Հետաքրքիր է, որ Թռեղքի հուշարձանների միջինբրոնզեդարյան վաղ խմբին են վերագրվում նույնպես անփոս դամբանաբլուրները՝ մեկ բացառությամբ (*Э. М. Г о г а д з е. *Նշվ. աշխ., էջ 103):*

[47] Г. Е. А р е ш я н, А. Е. С и м о н я н. Работы в Иджеванском районе.– В кн.: Археологические открытия 1986 года (*այսուհետև* ՝ АО). М., 1988, с. 469. *Ի դեպ՝ 1981 թ. պեղումներով այստեղ գտնված խեցանոթները համադրվել են Ալագանի հովտի դամբանաբլուրներում հայտնաբերվածների հետ (Ս. Ե. Գ ա ս պ ա ր յ ա ն. Դամբանաբլուրի պեղումներ Իջևանի շրջանի Բերքաբեր գյուղում.– ՊԲՀ, 1987, -1, էջ 233):*



Աղյուսակ

րից[48]*: Ավելացնենք, որ դամբանաթմբի գագաթին ոչ մեծ քարաբեկորի տեղադրումը բնորոշ է Հայաստանի միջին և ուշբրոնզեդարյան մի շարք դամբարանադաշտերին՝ Վերին նավեր, Արուճ, Քարաշամբ*[49]*, Գոգարան, Ապարան*[50] *և այլն: Տեղին է հիշել նաև, որ Հյուսիսային Կովկասի դամբանային կոթողները (մարդակերպ քարե կուռքեր) թվագրվում են ամենաուշը III հազարամյակի 3-րդ քառորդով*[51]*:*

Ի մի բերելով վերն ասվածը դամբարանի կառուցվածքի, սրանում հայտնաբերված արտեֆակտերի ու դրանց զուգահեռների վերաբերյալ՝ կարելի է եզրակացնել, որ Աշտարակի Խոջաբաղերի դամբանաթումբը պատկանում է դամբանաբլրային թաղումների մշակույթին: Վերջինս, ուսումնասիրողների կարծիքով, Հայկական լեռնաշխարհում գոյատևել է մ. թ. ա. XXIII–XXI դարերում[52]*:*

Այժմ համառոտ անդրադառնանք քննարկվող դամբանաթմբային թաղման որոշ բաղադրիչների ծիսական նշանակությանը: Դամբանային համալիրի (մասնավորապես՝ դամբանաթմբի) ողջ տարածքում վանակատի, կայծքարի բեկորներ սփռելը և դրանցից պատրաստված գործիքներ ու զենքեր տեղադրելը

---

[48] *Գ. Արեշյան, Հ. Օհանյան, Ե. Ասատրյան. Հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի 1984 թ. դաշտային աշխատանքների արդյունքներից.– «Երևանի համալսարան», 1985, -2, էջ 14:* Г. Е. Арешян. Новонайденное курганное поле у южного подножья горы Арагац.– Всесоюзная археологическая конференция “Достижения советской археологии в XI пятилетке”. Тезисы докладов. Баку, 1985, с. 63-65. *Նույնի*՝ Раскопки в Маисяне.– АО 1984 года. М., 1986, с. 427-428. *Նույնի*՝ Маисянские курганы.– АО 1985 года. М., 1987, с. 558-559.

[49] *Քարաշամբի մեծ դամբանաբլուրի վրա, լիցքի կենտրոնական հատվածում, տեղադրված է եղել բազալտե ոչ մեծ ֆալլաձև կոթող* (В. Э. Оганесян. *Նշվ. աշխ., էջ* 27*): Նմանատիպ կոթող է գտնվել նաև Գոգարանի ուշբրոնզեդարյան -2 դամբանաբլուրի դամբանասրահներից մեկի «սալածածկի մեջտեղում» (Ա. Բաղրամյան. Գոգարանի II դամբանաբլուրը.– Հայ ժողովրդական մշակույթի հետազոտման հարցեր: Երիտասարդ գիտնականների VIII կոնֆերանս. Զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ ԵԳԿ). Երևան, 1988, էջ 12):*

[50] *Ծակոտկեն բազալտից կերտված կուռք է հայտնաբերվել Ապարանի ջրամբարի ափի -11 դամբարանից (ուշ բրոնզի I փուլ), որն իբրև շինաքար օգտագործված է եղել դամբանախցի պատի շարվածքում՝ գլխիվայր, շրջված դիրքով: Հավանաբար, կուռքն ավելի հին է հիշյալ դամբարանից (Ֆ. Մուրադյան. Պեղումներ Ապարանի ջրամբարի ափին.– ԵԳԿ, VIII, էջ 55–56):*

[51] И. М. Чечено в. Богатые захоронения в кургане раннебронзового века у сел. Кишпек в Кабардино-Балкарии.– В кн.: Северный Кавказ в древности и в средние века. М., 1980, с. 17, 30, рис. 2.

[52] *Տե՛ս* Б. А. Куфтин. *Նշվ. աշխ., էջ 101–105:* Э. М. Гогадзе. *Նշվ. աշխ., էջ 95:* Ш. Ш. Дедабришвили. *Նշվ. աշխ., էջ 25:* К. Х. Кушнарева. К проблеме выделения археологических культур периода средней бронзы на Южном Кавказе.– Краткие сообщения Института археологии, вып. 176. М., 1983, с. 12. *Նույնի*՝ Южный Кавказ в VI-II тыс. до н. э.– Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук. Ереван, 1986, с. 14–17. *Պ. Ավետիսյան, Ռ. Բադալյան, Ս. Հմայակյան, Ա. Փիլիպոսյան. Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանների պարբերացման և ժամանակագրության հարցերի շուրջ.– ԴՀԱԱ, 1996, էջ 8–10:* A. Smith, R. Badalyan, P. Avetisyan and M. Zardaryan. Early Complex Societies in Southern Caucasia: A Preliminary Report on the 2002 Investigations by Project ARAGATS on the Tsaghkahovit Plain, Republic of Armenia.– American Journal of Archaeology, 108, 2004, p. 3 *և այլն: Բեդենյան դամբանաբլուրների համար առաջարկվել են ժամանակագրական ավելի լայն սահմաններ՝ մոտավորապես մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կես – մ. թ. ա. II հազարամյակի սկիզբ* (Г. Ф. Гобеджишвили. *Նշվ. աշխ., էջ 133, 136):*

թաղման խցում կամ հարթակի վրա, որպես ծիսակարգի բաղադրիչ՝ ծիսական արարողություն, վաղուց է դիտարկվել, և հետազոտողները բազմիցս փորձել են լուսաբանել այն[53]: Դամբարաններում վանակատի և կայծքարի բեկորներ տեղադրելու սովորությունը կիրառվել է դեռևս մուստերյան դարաշրջանում[54], իսկ հյուսիսարևելյան Հայաստանում գոյություն է ունեցել առնվազն պղնձեքարեդարում[55]: Կարելի է եզրակացնել, որ դամբանաբլրով մեկ վանակատի և կայծքարի բեկորներ ու ծլեփներ շաղ տալու արարողությունը, կարծես, վերաբերել է դամբանային համալիրի մաքրագործման ծիսակարգին[56], իսկ թաղման հարթակի վրա կամ սրահում (մասնավորապես՝ ննջեցյալի շուրջը և հատկապես՝ գլխակողմում) դրանց զետեղելը, ըստ երևույթին, մտնում էր հանգուցյալի աճյունի կամ դիակի պահպանության ծիսակարգի մեջ[57]: Վանակատին և կայծքարին, հավանաբար, վերագրվում էր փորձանքն ու չար աչքը խափանելու, չար ոգիները և վնասակար ազդեցությունները վանելու հատկություն:

Հարկ ենք համարում կրկին երկու խոսք ասել Խոջաբաղերի դամբանաթմբի պեղումներով հայտնաբերված բնափայտի փոքրիկ կտորի մասին: Ուսումնասիրողները, միանգամայն արդարացիորեն կարծում են, որ դեռևս հնագույն դարերում մեր նախնիները կարողացել են ըստ արժանվույն գնահատել կարմիր ծառի բնափայտի որակական հատկանիշները և դրանք տեղին օգտագործել: Սակայն, այս դեպքում, հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ կարմրածառը (գեղձի, կենի) հնում տարբեր ժողովուրդների մոտ ընկալ-

---

[53] *Մասնավորապես, Խոջաբաղերի դամբանաթմբին համաժամանակյա Թռեղքի դամբանաբլուրների հնագույն խմբին բնորոշ է լիցքի վրա վանակատի մեծ ու փոքր բեկորների խիտ «ցանվածքը» (տե՛ս* Б. А. К у ф т и н. *Նշվ. աշխ., էջ 101, 121): Խնդրի առնչությամբ տե՛ս նաև* Б. В. Т е х о в. Тлийский могильник (комплексы XVI–X вв. до н. э.). Тбилиси, 1980, с. 52–53; А. Е. С и м о н я н. Обсидиан и кремень как атрибуты погребального обряда.– Вопросы изучения армянской народной культуры (культура и язык). VIII конференция молодых ученых. Тезисы докладов. Ереван, 1988, с. 79–81; *Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Ուշբրոնզեդարյան թաղման ծեսը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (ըստ հնագիտական տվյալների).– Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն. Երևան, 1997, էջ 77, 180, 187:*

[54] *Ի. Ա ռ ւ գ ռ ւ ս տ ա. Մեծ հայտնագործումներ. Երևան, 1974, էջ 138:* С. К. Д и к ш и т. Введение в археологию. М., 1960, с. 162.

[55] О. А. А б и б у л л а е в. Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982, с. 39–50. *Օ. Ս. Խ ն կ ի կ յ ա ն. Սյունիքի մ. թ. ա. IV–I հազարամյակի թաղման ծեսի մեկնության փորձ.– «Բանբեր Երևանի համալսարանի», 1993, -3, էջ 126:*

[56] *Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Ուշբրոնզեդարյան թաղման ծեսը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (ըստ հնագիտական տվյալների), էջ 12:*

[57] *Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Աշտարակի Խոջաբաղերի ուշբրոնզեդարյան դամբարանները.– ՊԲՀ, 1997, -2, էջ 253: Ն ո ւ յ ն ի՝ Արուճի դամբարանադաշտի ուշբրոնզեդարյան -5 դամբարանը (Թաղման ծեսը մեկնաբանելու փորձ).– ՊԲՀ, 2005, -3, էջ 166: Հանգուցյալի գլխակողմում վանակատե նետասլաք է տեղադրված եղել Խաչբուլաղի դամբանաբլուրում* (Г. П. К е с а м а н л ы. Хачбулагский курган с массовым захоронением.– Материальная культура Азербайджана, т. VIII. Баку, 1976, с. 55*):*

վում էր որպես սրբազան (կենաց) ծառ[58]*: Այն աճում էր արքայական պալատի առջև՝ Սարագոսայում (Իսպանիա)*[59]*: Կենին տնկում էին նաև գերեզմանոցներում՝ որպես մահը հաղթահարելու խորհրդանիշ*[60]*: Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդների ավանդույթներում (խեթական, հին գերմանական, սկանդինավյան, անգլո-սաքսական, կելտական և այլն) տիսն ընկալվում էր որպես հավերժական կյանքի ու վերածննդի խորհրդանիշ*[61]*: Մեկ այլ տեսակետով՝ սաղարթախիտ գեղձին ձոնված էր ստորերկրյա աստվածներին, այն տնկում էին գերեզմանների մոտ և համարում էին չարագուշակ (չարագույժ) ծառ*[62]*: Հետևաբար, կարմիր ծառի բնափայտի օգտագործումը թաղման ծեսի համակարգում, առավել ևս՝ թաղման պատգարակներ պատրաստելիս, նախևառաջ, հարկ է բացատրել աշխարհայացքային պատկերացումներով և հետո միայն՝ փայտի մշակման նկատառումներով*[63]*:*

Աշտարակի Խոջաբաղերի դամբանաթմբում, հավանաբար, կատարվել է վերգետնյա թաղում՝ քարե շրջանի ներսում, հարթակի վրա: Ինչպես բուն դամբանախցի, այնպես էլ կմախքի բացակայությունից կարելի է ենթադրել, որ ննջեցյալն ամփոփվել է դիակիզման եղանակով[64]*: Իսկ պեղումներով գտնված*

---

[58] Я н Ф и л и п. Кельтская цивилизация и ее наследие. Прага, 1961, с. 164. Э. Ц е р е н. Лунный бог. М., 1976, с. 129; *Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը. Երևան, 1997, էջ 91:*

[59] Песнь о Роланде. Старофранцузский героический эпос. М.–Л., 1964, с. 16.

[60] В. Н. Т о п о р о в. Древо жизни.– Мифы народов мира *(այսուհետև* ՝МНМ*),* т. 1. М., 1980, с. 396.

[61] Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. Индоевропейский язык и индоевропейцы, т. II. Тбилиси, 1984, с. 628–631.

[62] Ф е о ф р а с т. Исследование о растениях. Перевод с древнегреческого М. Е. Сергеенко. Л., 1951, с. 410, прим. 86.

[63] *Ի դեպ, կարմրածառի ամուր փայտից հնում պատրաստում էին թե՛ կահույք, թե՛ նետաղեղներ (նույն տեղում, էջ 409, ծան. 85):*

[64] *Մեռյալներին դիակիզման եղանակով թաղելը հոգու մասին հին հավատալիքների դրսևորումներից է* (Г. Ф. Н и к и т и н а. Погребальный обряд культур полей погребений Средней Европы в I тысячелетии до н. э.–первой половине I тысячелетия н. э.– Погребальный обряд племен Северной и Средней Европы в I тысячелетии до н.э.–I тысячелетии н. э. М., 1974, с. 59*): Թաղման այս եղանակը, ըստ երևույթին, առաջացել է մարմնի և հոգու փոխկապակցվածության պատկերացումների հիման վրա: Դիակիզման եղանակում կիրառվող կրակը, անկասկած, ուներ խորհրդանշական իմաստ՝ այն վերածնող էություն էր ամփոփում (*Л. И. А к и м о в а. Об отношении геометрического стиля к обряду кремации.– Исследования в области балто-славянской духовной культуры. Погребальный обряд. М., 1990, с. 231*) և ոչ միայն արագացնում էր «մարմնական կապանքներից» հոգու ազատագրումը, այլև՝ մաքրագործում էր մարդուն* (Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. *Նշվ. աշխ., էջ 831): Այդ ժամանակաշրջանի պատկերացումներում մահն ու վերածնունդը փոխկապակցված էին, իսկ կրակը, հավանաբար, կոչված էր ապահովելու ննջեցյալի վերածնունդը* (В. Я. П е т р у х и н. Погребения знати эпохи викингов.– Скандинавский сборник, 21. Таллин, 1976, с. 155*): Հուղարկավորման ծիսակարգում դիակիզման եղանակի կիրառությունը՝ թաղման ծեսի մաքրագործման ծիսակատարությունների համակարգում կրակի դերի ուժեղացման տրամաբանական ամփոփումն էր (Գ. Ս. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Ուշբրոնզեդարյան թաղման ծեսը..., էջ 110):*

ածխացած բարակ ճյուղերի փոքրիկ կտորները, միգուցե, դամբանաթմբի տարածքը կրակով մաքրագործելու ծիսակատարության հետքերն են[65]:

Դամբանաթմբի գագաթին դրված բազալտե որձաքարը, ակներևաբար, ծիսական նշանակությամբ համարժեք է հուշակոթողին, որը, մասնավորապես, անդրաշխարհի հետ հաղորդակցության միջոց էր[66]: Հուշակոթողը, ժամանակի պատկերացումներում, սերտորեն առնչվում էր «տիեզերական առանցքը» (axis mundi) խորհրդանշող կենաց ծառի հետ և ընկալվում էր որպես երկինք տանող ճանապարհ[67], այսինքն՝ մարմնավորում էր վերածննդի (անմահության) գաղափարը: Ինչպես կենաց ծառը, այնպես էլ ժայռաբեկորը, մենհիրը, սյունը ունեին «ծնելու» հատկություն[68], ուստի կարող էին նպաստել մահացածների վերածննդին: Այսպիսով, անդրշիրիմյան աշխարհ – երկիր – երկինք անցումը կատարվում էր նաև հուշակոթողի միջոցով:

Դամբանաթմբային թաղումները, առհասարակ, բավականին տարածված են կուր-արաքսյան մշակույթում: Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում դրանք ի հայտ են գալիս առնվազն մ. թ. ա. IV հազարամյակի 2-րդ կեսում և, անընդմեջ շարունակվելով, հասնում են մինչև քրիստոնեական ժամանակաշրջան: Եթե ճշմարիտ է պատմիչ Կիրակոս Գանձակեցու հաղորդումը վախճանված Գրիգոր Լուսավորչի վրա քարակարկառ կուտակելու մասին[69], ապա, թերևս, դա կարելի է համարել դամբանաթմբային թաղման ծիսակարգի դրսևորում արդեն մ. թ. IV դարում: Դամբանաբլուրների տակ թաղումները կատարվել են տարբեր եղանակներով (դիաթաղում, դիակիզում և այլն) և տարբեր կառույցներում (դամբանափոսեր, վերգետնյա ու ստորգետնյա քարարկղներ, հուղարկավորման վերգետնյա հարթակներ): Դամբանաթմբային ծիսակարգի հիմնական գաղափարը համարվում է ննջեցյալների վերածնունդը, իսկ դամբարանը՝ տիեզերքի մանրակերտը[70]: Դամբանաբլրային թաղումները հիշատակվում

---

[65] *Հնում համարում էին, որ դամբարանի կամ դիակիզման խարույկի տարածքը չար ոգիների բնակության վայրերից է: Ծիսական տարածքը կանխավ «մաքրագործվում» էր, մասնավորապես՝ կրակով, նաև աղոթքներ էին արտասանվում. «Հեռացե՛ք, ցրվեցե՛ք ... ցրի՛վ եկեք այստեղից...»* (Ригведа. Избранные гимны. М., 1972, X, 14, 9)*:*

[66] М. И. Стеблин-Каменский. Комментарии.– В кн.: Старшая Эдда. Древнеисландские песни о богах и героях. М.–Л., 1963, с. 216.

[67] В. Н. Топоров. Древо мировое.– МНМ, с. 398; М. Элиаде. Космос и история. М., 1987, с. 169. *Այս առումով հետաքրքիր է ուղղաձիգ կանգնեցված փայտակերտ կոթողների կիրառության վերաբերյալ ենթադրությունը (Գ. Ե. Արեշյան. Պահպանական պեղումներ Քանագեղի դամբարանադաշտում.– ԴՀԱԱ, 1981, էջ 2-4):*

[68] Э. Церен. *Նշվ. աշխ., էջ 264:*

[69] *Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց. աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 13:*

[70] Е. А. Савостина. Сакральное пространство и погребальный обряд боспорских гробниц.– Исследования в области балто-славянской духовной культуры, с. 241. *Կարծիք է հայտնվել, որ դամբանասրահը կարող էր խորհրդանշել անդրաշխարհը, դամբանաբլուրը՝ երկիրը, իսկ հուշակոթողը՝ երկինքը* (Ю. А. Шилов. Космические тайны курганов. М., 1990, с. 59*):*

են վեդաներում[71], *հոմերոսյան պոեմներում*[72] *և այլ սկզբնաղբյուրներում, որոնցում գերեզմանն ուղղակի համադրվում է բլուրի հետ: Կուրգանները բնորոշ են համարվում հնդեվրոպական մշակույթներին*[73]*: Ընդունված տեսակետներից մեկի համաձայն, հնդեվրոպական հանրության նախահայրենիքը Հայկական լեռնաշխարհն է*[74]*: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ դամբանաթմբային մշակույթը տեղաբնիկ է մեր լեռնաշխարհում:*

КУРГАН В МЕСТНОСТИ ХОДЖАБАГЕР Г. АШТАРАКА В КОНТЕКСТЕ КУРГАННОЙ КУЛЬТУРЫ

ГАРЕГИН ТУМАНЯН

Р е з ю м е

В 1988 г. Аштаракским отрядом отдела новостроечной археологии Института археологии и этнографии НАН Республики Армения в местности Ходжабагер на западной окраине города Аштарака раскопан курган диаметром 8–8,5 м. и высотой 0,5–0,6 м. На вершине кургана была установлена базальтовая глыба высотой 0,5 м. Раскопками выявлено, что под каменно-земляной насыпью кургана была устроена наземная погребальная площадка, огороженная каменным неправильным кругом диаметром 4–5 м., где, предположительно, был помещен прах покойника в соответствии с обрядом кремации. Обнаруженный при раскопках кургана археологический материал состоит из кусков обсидиана и кремня разного назначения, которыми был усыпан весь курган, из обсидианового наконечника стрелы миндалевидной формы с острыми ретушированными краями и прямоугольным вырезом в нижней части, маленького обломка дерева и из фрагментарных черно- и буролощенных сосудов с вдавленными и резными орнаментами ленточно-диагональных композиций, а также орнаментированных волнистыми (зигзагообразными) линиями с помощью зубчатого валика. На основании строения кургана и найденных артефактов делается вывод, что Аштаракский курган относится к культуре курганных погребений и датируется XXIII–XXI вв. до н. э. Рассматриваются также вопросы ритуального характера.

---

[71] Ригведа, X, 18, 4; Атхарваведа. Избранное. Перевод, комментарий и вступительная статья Т. Я. Елизаренковой. М., 1976, с. 380, прим. 67.

[72] *Իլիական. հին հունարեն բնագրից թարգմանեց Հ. Համբարձումյանը. Երևան, 1955, I, XXI, XXIII, XXIV: Ոդիսական. հին հունարենից թարգմանեց Հ. Համբարձումյանը. Երևան, 1988, I, II, III և հտն.:*

[73] M. G i m b u t a s. Proto-Indo-European Culture: The Kurgan Culture during the Fifth, Fourth, and Third Millennia B. C.– Indo-European and Indo-Europeans. Philadelphia, 1970, pp. 155, 156, 190; *Ն ո ւ յ ն ի՝* Old Europe c. 7000 – 3500 B.C.: the Earliest European Civilization before the Infiltration of the Indo-European Peoples.– The Journal of Indo- European Studies, 1973, 1/1, pp. 1, 13, 16.

[74] Т. В. Г а м к р е л и д з е, В. В. И в а н о в. *Նշվ. աշխ., էջ 890:*

A BARROW IN THE SITE OF KHOJABAGHER, ASHTARAK TOWN IN THE CONTEXT OF KURGAN CULTURE

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

In 1988, the “Ashtarak” team of the Institute of Archaeology and Ethnography, NAS, Republic of Armenia, excavated a barrow with a diameter of 8-8.5 meters and a height of 0.5-0.6 meters in the western outskirts of the Ashtarak town. A basalt block with a height of 0.5 meters was placed on the top of the barrow. Excavations revealed a funeral ground under the stone-earthen embankment of the barrow surrounded with irregular stone circle with a diameter of 4-5 meters, where presumably the cremated ash of the deceased was placed. Archaeological material that was found during excavations of the barrow contained pieces of obsidian and flints of diverse purposes scattered all over the area of the barrow, an arrow-head made from obsidian in a form of almond with sharp retouched edges and rectangular cut on the base, a small fragment of wood, and fragments of black and grayish-brown vessels with pressed and carved ribbon-diagonal ornaments as well as wavy (zigzag) ornaments made by a toothed roller. On the basis of the revealed features of barrow construction and the characteristics of the excavated artifacts a conclusion was made that the Ashtarak barrow is related to the culture of burial-mounds and is dated to the 23rd–21st cc. B.C. Issues related to rituals are also discussed.